

տպարանն լոյս ընծայում գիրքերն մեզ ծանօթ են նաև «Հերբումն մոյար դրութեան», «Աստուածպաշտութիւն» 1852:

193. **Պոեմիանոս Պայտեանց**, հարուստ կալուածատեր-վաճառական, որ 1840 ին Տերվիշ օղլու խանի մէջ տպարան մը կը բանայ ուր իր նովանաւորութեամբ 10 Օգոստոսին կ'սկսի հրատարակուիլ **Արցալոյս Արարատեանը** մինչև 1844, երբ իր և քերթին տըր՝

194. **Պուկաս Պայծաղարեանի** միջև հակառակութիւն մը ծագելով, վերջինս Պայտեանցի նովանաւորութիւնը կը չքն ու իր անուան կը փոխանցէ տպարանը, հոն տպելով մինչև թերթը 20 Մայիս 1844 էն սկսեալ: Տպարան ու տառեր կը փանան 1845 ի հրդեհին, և «Արշալոյս Արարատեան» առանց ընդմիջումի կ'սկսի հրատարակուիլ:

195. **Մեսրոպեան Աարծարանի Տպարանն**, որուն մամուլն ու կազմածքը 1840 ին նուիրած էր Թրիեսքե քնակող Ժեյսուֆեան Պետրոս (1773-1846) որ մեծ առատաձեռնութիւններ ալ բրած է Իզմիթի բարեկաւատակ հաստատութեանց: Մեսրոպեան տպարանը 1841 ին լոյս ընծայած է մեծանուն վարժապետ-քահանայ Միրզա Յովն. Վանանդեցիի **Ոսկի դար Հայաստանին**՝ որուն յառաջարանն կը քաղենք սա ուշագրաւ հատուածը. — «զմակի դարն Հայաստանի գընտիր յերկա իւր, յորում գանձուղիքին նախանձելի դարուն զեղեցիկս նկարագրեալ՝ հաստատե . . . երէ նախկին խանձարուրք երջանկութեանն այնմիկ Հայաստան եղև, ուր տնկեցաւ դրախտն ի քնակութիւն նախաձայրին քնակութեան: Բայց աւաղ «դիպուածոյս. զի տիրանրաւեր կոչումն նորին յերոյրն հասարակաց, չարժանացոյց գովանի՝ «ստան գտապարտութիւն նորին տեսանել»: — Դարձեալ, 1843 ին հոն տպուած են Ֆենեդինի **Արկածի Արիստովմոսի** (բրգմ. Գ. Հմայեակ Կոստանդեան), **Աղալա** (բրգմ. Հ. Տ. Սափալանեան), **Սեմադոս**, 1842 ին **Խորհրդածութիւնք** շնորհաց և նշանաց և խորհրդոց քրիստ. Ս. Եկեղեցւոյ, **Տրամաբանութիւն** (բրգմ. նոյն), **Հաբլու բարոյ. առակներ** (1844): — Դատնալով **Արցալոյսի**, աւելցունենք քի տիրոջը մանեն վերջն ալ Յր. Սվաճեանի խմբագրութեամբ շարունակուած է այս թերթը զոր կառավարութիւնը դադրեցուց 1886 ին (*) :

196. **Քապիկեան**, վիճագրատուն-տպարան, ըստ Մ. Նուպարեանի՝ 1840 էն առաջ հիմնուած Պօղոս Թաղիկեանէ, որուն կը յաջորդէ եղբայրը Պետրոս: Ասոնց մահուամբ, հիմայ երկու քեռորդիներ կը շարունակեն մինչև յոյն գործը, զբաղելով առևտրական բազմալեզուեան գործերով: Տպած են «Ծրագիր ուսմանց Զմիռնիոյ վիճակին» 1892, «Տեղեկագիր հայ ընթերցատան» 1894-5, «Մոնիթօր և մնչիւն» են. :

197. **Տպ. Արագածունեանց** + — 1 Մարտ 1843 ին Խաչատուր Յ. Մելիք-սելումեանէ, Պապօ Պապիկ և Մնտ. Գեորգ Մնտ. Խաչիկեանէ կազմուած համանուն Ընկ.ը պցտիկ Վեգիր խանի մէջ կը հիմնէ տպարան մը ուրիկ 28 Մայիս 1843 ին լոյս կ'ընծայէ **Հայրենասէր** թերթը՝ դադրած 1846 ին: — Թերթին սկզբնաւորութեան տարին՝ հոն տպագրուած է նաև «Համառօտութիւն ազգասիրական սխրագործութեանց Տեառն Ներսիսի նորընտիր Հայրապետի Ամենայն Հայոց»: — Այնուհետև ընկերութիւնը լուծուած է:

198. «**Պատանեկան Տպարաններ**», կը կոչէ Մ. Նուպարեան 1850ական և 60ական բուսականներուն՝ տուներու մէջ հիմնուած այն մանր մուկ տպարանական ձեռնարկները զորս Անդրեաս վարժապետի աշակերտները կատարած են՝ հոսկէ հոնկէ իրենց ձեռք ձգած Արապեան տառերով և վաճառատուններու յատուկ մամուլակներով (presse) լոյս ընծայելով մանրադիտական հանդէսներ որոնցմէ կը յիշէ ինք Մեսրոպեան սանուց **Բաղդոշ** թերթիկը:

199. **Տեւեան Խղարք** + — ՅԱՐՈՒԹԻԻՆ ծնած է Իզմիթ 10 Մարտ 1832 ին: Նխն. կրթ. ստացած Մեսրոպեան դպրոցը: Պատիկուց սիրահար տպագր. արուեստի՝

(*) Ինչ որ ալ ըսուի, անուրանալի է որ Իզմիթի Հայոց ձաւուր զարգացման դրական ազգակ մը հանդիսացած է Բաղդակեանց **Շեմարան** պատկերալարց աշխարհաբար ամսաթերթը, որմէ լեռոյ այլ եւս արժարժած կ'երեւի ընթերցասիրութեան եռանդը տեղացի ազգայնոց որոնք յաջորդաբար կ'ունենան զանազան թերթեր: Իսկ 1843 ին Տիգրան Սափալան, Արամ Տեւեան եւ Մարտիրոս Ափիւարեան ուսումնականք կը կազմեն հրատարակական մը: Ուր ուրեմն Տեւեանք կը սպաղմեն Իզմիթի Հայոց Ոսկեղաբը: